«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/149

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 դեկտեմբերի 2025 թ. N 149

«ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Արարատ, Խանջյան 67

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում
4 /չորս/ տարի ժամկետով, 24 հուլիսի 2021 թ. N 57

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի դեկտեմբերի 10-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 12 օգոստոսի 2025թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 11 մարտի 2025թ.
փորձագիտական այցի իրականացում՝ 14-16-ը ապրիլի 2025թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 14 հուլիսի 2025թ.
թերությունների վերացման նախնական
ծրագրի ներկայացում՝ 22 հուլիսի 2025թ.

ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Լիլիթ Բադալյան** ՝բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի լեզվաբանության և հաղորդակցման տեսության ամբիոնի վարիչ, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Օլեգ Գևորգյան՝** տեխնիկական գիտ. թեկնածու, դոցենտ, ՀԱՊՀ Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի Գիտական, գիտատեխնոլոգիական համագործակցության և արտաքին կապերի գծով տնօրենի տեղակալ, «Էլեկտրոնիկա, կենսաբժշկական և չափիչ համակարգեր» ամբիոնի դոցենտ, փորձագիտական խմբի անդամ
- **Էլինա Գրիգորյան՝** Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ասիստենտ, փորձագիտական խմբի անդամ
- **Կարինե Մխիթարյան՝** Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ուսանողուհի, փորձագիտական խմբի անդամ՝ ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Բավարարում է
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. Արարատի պետական քոլեջը իրականացնում է նախնական և միջին մասնագիտական կրթություն՝ համապատասխան ՀՀ ՈԱԾ 4-րդ և 5-րդ մակարդակներին: Գործող կրթական ծրագրերը ընդհանուր առմամբ համահունչ են հաստատության առաքելությանը և տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին: Քոլեջը վերջին տարիներին կատարել է որոշ ծրագրային

վերանայումներ, ներդրել է նոր մասնագիտություններ և բարելավել նյութատեխնիկական պայմանները, ինչը նպաստում է ուսումնական գործընթացի կայունացմանը: Պրոֆեսորադասախոսական կազմը արդյունավետ ապահովում է ծրագրերի իրականացումը, գործում է մենթորության համակարգ, առկա են գործատու-դասախոսներ: Պրակտիկայի կազմակերպման ուղղությամբ արձանագրվում է համագործակցության զարգացում: Այս ամենը ապահովում է **որակավորումների արժանահավատ շնորհումը**: Միևնույն ժամանակ, կրթական ծրագրերի մշակման և մշտադիտարկման գործընթացներում դասախոսական կազմի մասնակցությունը սահմանափակ է, ուսումնառության վերջնարդյունքների գնահատման գործիքակազմում բացակայում են հստակ մեթոդական շրջանակներ և ռուբրիկներ: Հետազոտական բաղադրիչը մասնագիտական մոդուլների կառուցվածքային մաս չի հանդիսանում, և բացակայում են հաստատված մեթոդական ցուցումներ ուսանողական հետազոտությունների կազմակերպման և գնահատման համար:

II. Քոլեջի կառավարման համակարգը կառուցված է կոլեգիալ և միանձնյա ղեկավարման համադրությամբ, սակայն ռազմավարական և **արդյունքահեն կառավարման** տեսանկյունից առկա են էական խնդիրներ: Նախորդ հավատարմագրման ընթացքում ներկայացված մի շարք խորհրդատվություններ լիարժեք չեն իրագործվել և կրկնվում են ընթացիկ գնահատման փուլում: Ռազմավարական ծրագրում բացակայում են կարճաժամկետ և միջնաժամկետ պլանավորման հստակ գործողությունների պլաններ, չափելի ցուցիչներ, պատասխանատուներ և ժամկետներ: Տվյալների հավաքագրումն իրականացվում է հարցումների միջոցով, սակայն դրանք չեն վերածվում վերլուծական եզրակացությունների և կառավարման որոշումների հիմքի: Հաշվետվություններում բացակայում է վերլուծական բաղադրիչը և ազդեցության գնահատումը: Որակի ապահովման համակարգը փաստաթղթային առումով առկա է, սակայն ինստիտուցիոնալ մակարդակում գործառույթների հստակ տարանջատում չկա: Որակի ապահովման հանձնաժողովի և որակի պատասխանատուի լիազորությունները հստակեցված չեն, իսկ ՊԻԳԲ (պլանավորում–իրականացում–գնահատում–բարելավում) ցիկլը ամբողջությամբ չի գործում:

III. Զարգացման հաջորդ փուլում քոլեջին նպատակահարմար է.

- ուժեղացնել կառավարման համակարգը՝ ապահովելով ռազմավարական ծրագրի վերանայում՝ ներառելով հստակ գործողությունների պլաններ, չափելի ցուցիչներ, պատասխանատուներ և իրատեսական ժամկետներ,
- ուժեղացնել Կառավարման խորհրդի ներգրավվածությունը ռազմավարական և որակի ապահովման գործընթացներում՝ ապահովելով, որ խորհուրդը ոչ միայն հաստատի փաստաթղթեր, այլ նաև քննարկի և գնահատի
    - հավատարմագրման մասին որոշումը և փորձագիտական խմբի բոլոր դիտարկումները,
    - բարելավման պլանի բովանդակությունը և կատարման ընթացքը,
    - ռազմավարական ծրագրի իրականացման արդյունավետությունը՝ հիմնվելով չափելի ցուցիչների վրա:
- ինստիտուցիոնալացնել որակի ապահովման գործառույթը՝ հստակեցնելով հանձնաժողովի և պատասխանատուի լիազորությունները, ապահովելով դրանց անկախություն և մեկ տարի հետո ներկայացնել հաշվետվություն կատարված փոփոխությունների վերաբերյալ,
- ապահովել հաշվետվությունների վերլուծական բաղադրիչի զարգացում՝ հարցումների և տվյալների արդյունքները կապելով կոնկրետ բարելավման գործողությունների հետ,

- մշակել հետազոտական գործունեության հստակ քաղաքականություն՝ սահմանելով ուսանողական և դասախոսական հետազոտությունների համար հստակ մեթոդական ուղենիշներ և ապահովելով դրանց կապը կրթական ծրագրերի վերջնարդյունքների հետ,
- իրականացնել կրթական ծրագրերի բենչմարկինգը և ապահովել դասախոսների ակտիվ ներգրավումը ՄԿԾ-ների մշակման և մշտադիտարկման գործընթացներում,

Ելնելով վերը նշվածից՝ Հավատարմագրման հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել ՄՈՒՀ-ի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողությունները՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
3. Հատուկ ուշադրություն դարձնել կրթական ծրագրերում որակավորումների արժանահավատ շնորհման արդյունավետ ապահովմանը՝ կազմակերպելով բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՄՈՒՀ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., դեկտեմբերի 10